

Ջերմատնային տնտեսությունների մասնագիտական կարիքների բացահայտում



Համագործակցությունը՝



Հաշվետվությունը պատրաստել է

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության
միջազգային կենտրոն-հիմնադրամը



Միջազգային ֆինանսական կորպորացիա © 2015

Պենսիլվանիա 2121, Վաշինգտոն 20433

Կայքը՝ www.ifc.org

Բոլոր իրավունքները պաշտպանված են

Այս աշխատանքում ներկայացված նյութի հեղինակային իրավունքները պաշտպանված են: Այս աշխատանքի կրկնօրինակումը և/կամ տարածումը առանց թույլտվության համարվում է համապատասխան օրենքի խախտում: Միջազգային ֆինանսական կորպորացիան չի երաշխավորում այս աշխատանքում ներկայացված նյութի ճշգրտությունը, հուսալիությունը կամ ամբողջականությունը, եզրակացությունները և դատողությունները և չի կրում պատասխանատվություն որևէ բացթողման կամ սխալների (ներառյալ տպագրական և տեխնիկական սխալներ առանց որևէ սահմանափակման) կամ այս նյութի վրա հիմնվելու համար:



Ցանկ

1. Ուսումնասիրության նպատակը	5
2. Մեթոդաբանություն	5
3. Ուսումնասիրության արդյունքներ	7
3.1 Ջերմատնային տնտեսությունների ընդհանուր նկարագրություն	7
3.2 Ջերմատնային տնտեսությունների հիմնական դժվարությունները	9
3.3 Ձեռնարկության գործունեության և հետագա զարգացման համար կարևոր խնդիրները	10
3.4 Համագործակցություն այլ ջերմատնային տնտեսությունների հետ.....	11
3.5 Մասնակցություն վերապատրաստման դասընթացների վերջին 3 տարվա ընթացքում.....	12
3.6 Հրավիրյալ մասնագետներ-խորհրդատուներ	12
3.7 Վերապատրաստման դասընթացների կարիք ջերմատնային տնտեսություններում	14
3.8 Ջերմատնային տնտեսություններում մասնագետների կարիքներ	15
3.9 Վերապատրաստումներին մասնակցելու պատրաստակամություն.....	16
3.10 Հմտությունների և գիտելիքների կիրառելիությունը ջերմատնային արտադրությունը կազմակերպելու համար	17
4. Եզրակացություն.....	19
5. Հավելված	21

1. Ուսումնասիրության նպատակը

Համաշխարհային Բանկի Միջազգային Ֆինանսական Կորպորացիան Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր նախագծի շրջանակում իրականացնում է տնտեսության տարբեր հեռանկարային ճյուղերում ներդրումային միջավայրի բարելավմանը, ձեռնարկատիրության զարգացմանն ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված գործողություններ: Այս ենթատեքստում ՀՀ Տնտեսության Զարգացման և Ներդրումների Նախարարության հետ համատեղ իրականացվել են ոլորտային ուսումնասիրություններ՝ զարգացման առաջնահերթությունները պարզելու նպատակով: Ուսումնասիրությունների հետևանքով բացահայտվել է, որ ջերմատնային ոլորտում կարողությունների զարգացման լուրջ պահանջ կա. անհրաժեշտ է մշակել ամբողջական կրթական ծրագիր՝ նորագույն դասավանդման մեթոդներով:

Տվյալ հետազոտության նպատակն էր բացահայտել ջերմատների ղեկավարների/ագրոնոմների վերապատրաստումների և մասնագիտական աջակցության կարիքները և ներկայումս գործող ջերմատների ղեկավարներին/ագրոնոմներին ընդգրկել կարիքների վրա հիմնված վերապատրաստման դասընթացների նախապատրաստական գործընթացի մեջ: Ջերմատների ղեկավարների/ագրոնոմների ամենօրյա փորձը, դժվարություններին և խնդիրներին լավատեղյակ լինելը մեծապես կնպաստեն ջերմատնային տնտեսություններում առկա մասնագիտական և վերապատրաստման կարիքները բացահայտելուն: Ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով օժտված նոր մասնագետների դերը հսկայական է ջերմատնային տնտեսությունների արդյունավետ գործունեության համար: Մույն հետազոտությունը նպատակ է հետապնդում բացահայտելու նաև այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք առաջնային են ջերմատների համար պահանջված և որակյալ մասնագետներ պատրաստելու համար:

2. Մեթոդաբանություն

Ջերմատներում առկա մասնագիտական և վերապատրաստման կարիքները բացահայտելու համար այցեր կատարվեցին Հայաստանում գործող 24 ջերմատներ: Հարցման մեջ ընդգրկվեցին նաև պարարտանյութեր և քիմիկատներ ներկրող Արտագրո կազմակերպությունը և Հայկական բերքի առաջնական կենտրոնը (ՀԲԱԿ), որոնք չունենին սեփական ջերմատուն, բայց ունենին աշխատանքային հարուստ փորձ ջերմատների հետ համագործակցության առումով: Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի հետազոտական խումբը ջերմատնային ասոցիացիա ՀԿ տնօրեն Պողոս Գևորգյանի հետ կատարեցին խորացված հարցազրույցներ ջերմատների ղեկավարների/ագրոնոմների հետ: Հարցազրույցների նպատակն էր պարզել ջերմատուն աշխատեցնելու հիմնական դժվարությունները, մասնագետների վերապատրաստման կարիքները և կարիքների


առաջնայնությունները: Առկա գիտելիքների և հմտությունների բազան հասկանալու համար հարցաթերթում ընդգրկվեցին որոշ հարցեր ջերմատնային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների վերաբերյալ: Հարցազրույցի մասնակիցները պետք է նշեին, թե ձեռնարկությունում ինչ գիտելիքների և հմտությունների պակաս կա և ապա գնահատեին դրանց առաջնայնությունը: Հատկապես այս գնահատումը միտված էր բացահայտելու հարցաթերթում նշված հմտությունների կարևորությունը, ինչը հետագայում կօգնի հետազոտական թիմին և ծրագրում ընդգրկված մյուս մասնագետներին՝ կազմել ուսումնական պլան, որտեղ ներառված կլինեն հարցազրույցների ընթացքում նշված թեմաները:

3. Ուսումնասիրության արդյունքներ

3.1 Ջերմատնային տնտեսությունների ընդհանուր նկարագրություն

Ջերմատնային տնտեսությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար հարցազրույցներ իրականացվեցին ջերմատներում: Ինչպես երևում է գծապատկերից, ջերմատների 64%-ը ուներ 1 հեկտարից փոքր տարածք, ջերմատների 16%-ը 1-2 հեկտար տարածք և 2 հեկտարից ավելի տարածք ունեին ջերմատների 20%-ը:


Գծապատկեր 1. Ջերմատնային տնտեսությունների տարածքը (հա)



Աղբյուրը՝ ICARE

Տնտեսությունների միայն 33% է կիրառում մշակության հիդրոպոն եղանակը, մնացած բոլորը արտադրությունը կազմակերպում են հողի վրա:


Գծապատկեր 2. Ջերմատնային տնտեսություններում մշակության եղանակ



Աղբյուրը՝ ICARE

Հարցման մասնակից ջերմատնային տնտեսությունները զբաղվում էին տարբեր արտադրատեսակների մշակությամբ: Ճնշող մեծամասնություն էին կազմում լոլիկի և վարունգի արտադրությամբ զբաղվող ջերմատները: Հարցազրույցին մասնակցած ջերմատների 48%-ը զբաղվում էր լոլիկի, իսկ 44%-ը՝ վարունգի արտադրությամբ: Ջերմատների արտադրատեսակների մեջ մտնում էին նաև պղպեղը, ելակը և ծաղիկները: Ջերմատների 12%-ը արտադրում էր պղպեղ, 8%-ը՝ ելակ և 32%-ը՝ ծաղիկ: Ծաղիկ արտադրողների 20%-ն արտադրում էր վարդ:

Գծապատկեր 3. Ջերմատնային տնտեսություններում մշակվող հիմնական արտադրատեսակները



Աղբյուրը՝ ICARE

3.2 Ջերմատնային տնտեսությունների հիմնական դժվարությունները

ICARE հիմնադրամի հարցազրուցավարները բաց հարցերի միջոցով փորձեցին ամբողջական պատկերացում կազմել ջերմատնային տնտեսությունները վարելու գործընթացի հիմնական դժվարությունների վերաբերյալ: Ստորև ներկայացված են այն հիմնական դժվարությունները, որոնք մտահոգում էին գրեթե բոլոր ջերմատնային տնտեսությունների ղեկավարներին:

Գազի գին

Ջերմատներ այցի ժամանակ պարզ դարձավ, որ հարցվող ջերմատների ճնշող մեծամասնության համար գազի թանկ գինը առաջնային խնդիրներից է: Ինչպես իրենք՝ հարցման մասնակից ջերմատների տնօրեններն են նշում, ցանկացած այլ խնդիր հնարավոր է լուծել սեփական ռեսուրսներով կամ մասնագետների օգնությամբ, բայց գազի բարձր գինը շատ մեծ հարված է Հայաստանում գործող ջերմատների համար, քանի որ ըստ իրենց հաշվարկների, գազի գինը կազմում է արտադրանքի ինքնարժեքի մոտ 50%ը:

Որակյալ սերմերի, բուժանյութերի, պարարտանյութերի պակաս

Ինչպես պարզ դարձավ հարցազրույցների ընթացքում, հարցման մասնակիցները ՀՀ-ում որակյալ սերմեր, բուժանյութեր և պարարտանյութեր գնելու մեծ խնդիր ունեն: Շատերը այն կարծիքին են, որ առկա սերմերը, բուժանյութերը շատ անզամ ցածրորակ են և հաճախ լուրջ վնասներ են հասցնում արտադրողներին՝ մեծապես նպաստելով ունենալով բերքատվության անկմանը: Ինչպես իրենք են նշում, հատկապես քիմիական դեղերի վատ որակը մեծ խնդիր է, հաշվի առնելով, որ կենսաբանականն էլ բավականին թանկ է:

Ագրոնոմների, բույսերի պաշտպանների պակաս

Հարցմանը մասնակցող ջերմատների ղեկավարները համակարծիք էին այն հարցում, որ Հայաստանում ջերմատները լավ ագրոնոմների և հատկապես բույսերի պաշտպանների լուրջ կարիք ունեն: Հատկապես վերջին տարիներին այս բացը շատ է անհանգստացնում ջերմատներին: Ինչպես իրենք են նշում, ոլորտում կան շատ քիչ թվով բանիմաց մասնագետներ, որոնք էլ համագործակցում են մի քանի ջերմատների հետ և վերապատրաստվելու, ունեցած գիտելիքները թարմացնելու ժամանակ չունեն: Շատ են լինում դեպքեր, երբ նոր հիվանդություններ են ի հայտ գալիս կամ կարիք է լինում անցնելու նոր տեխնոլոգիաների, իսկ ջերմատնային տնտեսության ագրոնոմները ի վիճակի չեն լինում օգնել նման հարցերում: Հատկապես քիչ են հիդրոպոնիկայի մասնագետները: Պրոֆեսիոնալ տեխնիկական հաստատությունները չեն պատրաստում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետներին: Ինչպես նշում է հարցազրույցին մասնակցած ջերմատների ղեկավարներից մեկը, հիմնական դժվարությունը ոչ միայն բարձրակարգ մասնագետ գտնելն է, այլև՝ ընդհանրապես ոլորտում առկա տեղեկատվության փոխանակման բացը:

3.3 Ձեռնարկության գործունեության և հետագա զարգացման համար կարևոր խնդիրները

Հարցազրույցներին մասնակցող ջերմատների ղեկավարները պետք է գնահատեն ձեռնարկության գործունեության և հետագա զարգացման համար գործունեներն ըստ կարևորության: Հարցվողների 68%-ն այն կարծիքին էր, որ ջերմատների գործունեության համար շատ կարևոր է ժամանակակից էներգախնայող համակարգերի կիրառումը, քանի որ, ինչպես իրենք են նշում, գազի գինը կազմում է ջերմատնային արտադրանքի ինքնարժեքի 50%ը, և էներգախնայող համակարգերը կթեթևացնեն այս ծանր բեռը: Սակայն ջերմատների ղեկավարները միակարծիք են, որ չնայած իրենք շատ են կարևորում էներգախնայող համակարգերի դերը ինքնարժեքի իջեցման հարցում, այնուամենայնիվ, այս գործոնը մեծապես կախված է ֆինանսական մեծ ներդրումներից և մասնագիտական որակյալ խորհրդատվությունից:


Մեծ կարևորություն ունեցող գործոններից է լավ պատրաստված գյուղատնտես-ագրոնոմներով ապահովվածությունը, որը, ինչպես իրենք՝ ջերմատների ղեկավարներն են նշում, չափազանց կարևոր է ջերմատան արդյունավետ գործունեության համար: Համալսարանները չեն ապահովում պրակտիկ գիտելիքներով օժտված մասնագետների, իսկ առկա ուսումնական պլանները չեն համապատասխանում արդի ջերմատների պահանջներին:

Ջերմատան ղեկավարների 80%-ը շատ էր կարևորում ինքնարժեքի իջեցումը ջերմատնային գործունեության զարգացման համար: Նրանց կարծիքով, ինքնարժեքի իջեցումը ուղղակիորեն կապված է նորագույն տեխնոլոգիաների, մասնավորապես՝ էներգախնայող համակարգերի կիրառման հետ:

Հատկանշական է, որ հարցման մասնակիցների 36%-ը խնդիր է տեսնում որակյալ պարարտանյութերի և քիմիկատների ձեռք բերման հարցում: Հարցազրույց իրականացվել է նաև պարարտանյութեր, քիմիկատներ ներկրող կազմակերպության տնօրեն-խորհրդատուի հետ, ով ոչ թե որակյալ քիմիկատների (բուժանյութերի, պարարտանյութերի) առկայության խնդիր էր տեսնում, այլ՝ ագրոնոմների, ջերմատան աշխատակիցների շրջանում գիտելիքի և տեղեկատվության պակասի:

Ջերմատների ղեկավարներից մեկը հատկապես մտահոգված էր արտահանման գործող ընթացակարգերով, ըստ որոնց, բուսասանիտարական հավաստագիրը իրենք պետք է ունենան և՛ Հայաստանում, և՛ արտահանվող երկրում, ինչը բավականին ծախսատար և շատ թղթաբանություն պահանջող գործընթաց է: Նշված խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտություն կա վերանայելու այս գործընթացը:

Գծապատկեր 4. Ձեռնարկությունների հետագա զարգացման համար կարևոր խնդիրները



Աղբյուրը՝ ICARE


3.4 Համագործակցություն այլ ջերմատնային տնտեսությունների հետ

Հիմնականում փոքր ջերմատների ղեկավարներն էին նշում, որ շատ են համագործակցում այլ ջերմատների հետ, հատկապես՝ փորձի փոխանակման և ընդհանուր առմամբ մասնագիտական հարցերով խորհրդատվության նպատակով: Հատկապես ակտիվ են համագործակցում ջերմատնային ասոցիացիայի անդամ ջերմատները: Ջերմատնային ասոցիացիան հաճախ է կազմակերպում հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվում են ջերմատների ներկայացուցիչներին մտահոգող խնդիրները և հենց իրենք՝ ասոցիացիայի անդամ ջերմատների ղեկավարները հաղորդակից են դառնում միմյանց փորձին: Ասոցիացիայի կազմակերպած հանդիպումներից գատ, ջերմատների ղեկավարները հաճախակի են փոխանակում շուկայական գների մասին տեղեկատվություն, հիվանդությունների դեմ պայքարի տարբեր միջոցներ, նոր սերմերի և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվություն: Ինչպես իրենք են նշում, այս ոչ պաշտոնական համագործակցությունը ասոցիացիայի մյուս անդամների հետ իրենց համար շատ կարևոր է, քանի որ շատ հաճախ համատեղ ջանքերով են փորձում լուծում գտնել մասնագիտական հարցերին՝ նոր սորտերի տեղայնացում, հիվանդությունների դեմ պայքար, շուկայական գների վերաբերյալ տեղեկատվություն:

3.5 Մասնակցություն վերապատրաստման դասընթացների վերջին 3 տարվա ընթացքում

Հարցազրույցների փուլին մասնակցած ջերմատների ղեկավարների, ագրոնոմների ընդամենը 42%-ն է վերջին 3 տարվա ընթացքում մասնակցել վերապատրաստման դասընթացների, սեմինարների: Հիմնականում ջերմատների վերաբերյալ սեմինարներ են կազմակերպել Հայկական բերքի առաջնորդական կենտրոնը (ՀԲԱԿ) և ՔԱՐԴ հիմնադրամը: Մասնակիցները դժվարությամբ մտաբերեցին սեմինարների թեմաները, բայց հիմնականում սեմինարները եղել են բույսերի պաշտպանության, ոլորտում առկա նորագույն տեխնոլոգիաների վերաբերյալ: Կային հարցազրույցին մասնակիցներ, ովքեր մասնակցել էին սեմինարների Հոլանդիայում, Հունգարիայում (De Ruter), ԱՄՆ-ում (Քոքրան, Սաբիտ) և Ուկրաինայում (բույսերի պաշտպանություն):

Գծապատկեր 4. Վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը



Աղբյուրը՝ ICARE

Մասնակիցների մոտ 60%-ը չէր մասնակցել վերապատրաստման դասընթացների, և սրա հիմնական բացատրությունը ժամանակի պակասն էր: Ջերմատների ղեկավարները նշում էին, որ իրենք չեն կարող թողնել տնտեսությունը աշխատանքային ժամերին և ցանկալի է, որ դասընթացները լինեն երեկոյան ժամերի:

3.6 Հրավիրյալ մասնագետներ-խորհրդատուներ


Հարցազրույցներին մասնակցող ջերմատների 80%-ը նշել է, որ ունեցել են հրավիրյալ մասնագետներ հայաստանյան այլ կազմակերպություններից և այլ երկրներից: Ջերմատնային

ասոցիացիան բավականին հաճախ է հրավիրում մասնագետների՝ հատկապես բույսերի, պաշտպանության, թունաքիմիկատների ճիշտ օգտագործման հարցերով: Ասոցիացիայի անդամ տնտեսությունները նշեցին, որ վերջին անգամ բույսերի պաշտպանության հարցով իրենք ունեցել են հրավիրյալ մասնագետ ԱՄՆ-ից, ով մեկօրյա այցով եղել է ջերմատներում և հաղորդել իր փորձը: Բայց պետք է նշել, որ փոքր ջերմատները սեփական նախաձեռնությամբ հազվադեպ են հրավիրում մասնագետների՝ իրենց հուզող հարցերով խորհրդատվություն ստանալու նպատակով: Ինչպես իրենք են նշում, փորձում են հարցերին լուծում տալ՝ ապավինելով սեփական փորձին և գիտելիքներին:

Հարցազրույցին մասնակցած մեծ ջերմատները որևէ նոր տեխնիկական նորարարության շահագործումից առաջ արտերկրից հրավիրում են մասնագետների, քանի որ, ինչպես իրենք են նշում, Հայաստանում չկան համապատասխան մասնագետներ: Նոր կոնստրուկցիաների տեղադրման հարցով եղել են մասնագետներ Իսրայելից, ԱՄՆ-ից: Մասնավորապես Priva համակարգի գործարկման համար մեծ ջերմատները դիմել են արտերկրյա մասնագետների: Եղել են դեպքեր, երբ ջերմատները հրավիրել են մասնագետների որևէ մշակաբույսի մշակության տեխնոլոգիան բացատրելու համար, օրինակ՝ Հոլանդիայից, Անգլիայից՝ ելակի մշակության համար:

Հոլանդիայից եղել են մասնագետներ, ովքեր տեղեկություններ են տրամադրել հետևալ թեմաներով՝ բույսերի մշակություն, CO2 գազի անջատումը շմոլ գազից, փորձարկումներ մակաբույծներով, վնասատուների դեմ պայքարն այլն: Նշված այցերի քիչ մասն է եղել հրատապ հարցերով: Հրատապ խորհրդատվություն եղել է ցեցերի, նեմատոդի, հիվանդությունների, հիբրիդների և Priva համակարգի գործարկման վերաբերյալ: Մնացած դեպքերում այցերը կազմակերպված են եղել ջերմատնային տնտեսությունների ասոցիացիայի կամ ԲԱԴԴ հիմնադրամի կողմից՝ փորձի փոխանակման նպատակով:

Գծապատկեր 5. հրավիրյալ մասնագետներ



Աղբյուրը՝ ICARE

3.7 Վերապատրաստման դասընթացների կարիք ջերմատնային տնտեսություններում

Ինչպես հարցազրույցի մասնակիցներն էին նշում, բույսերի պաշտպանության դասընթացների կարիքը իրենք ամենաշատն են զգում: Օրեցօր ի հայտ եկող հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է թարմացնել գիտելիքները, ծանոթանալ ռացիոնալ բուժման եղանակներին և տիրապետել հիվանդությունների դեմ պայքարի նորագույն մեթոդներին, որոնք կիրառելի կլինեն Հայաստանում, ինչպես նաև ստանալ համապատասխան գիտելիքներ, որոնք կօգնեն բացահայտել բույսերում տարբեր տարրերի պակասը: Հատկապես կարևոր է, որ դասընթացները ներառեն ճիշտ բուժման ձևեր ըստ միջատների՝ օրինակ սպիտակաթևիկ, ականոդ ճանճ:

Հարցվողների 16%-ը հատկապես հետաքրքրված էր բույսերի մշակության հիդրոպոնային եղանակով: Շատ կարևոր է, որ վերապատրաստումները ներառեն հիդրոպոնային եղանակին անցման ճիշտ ձևերի, անհրաժեշտ ռեսուրսների և մշակությունը այս ձևով ճիշտ իրականացնելու թեմաներ: Իրենց պետք է ամբողջական գիտելիք և ճիշտ խորհրդատվություն հիդրոպոնիկայի եղանակով մշակության վերաբերյալ:

Բավական լավ տեղեկատվություն տվեց թունաքիմիկատների խանութի տնօրենը, ով նշեց այն հարցերը, որոնցով իրենց ամենաշատն են դիմում ջերմատների մասնագետները և խորհուրդ տվեց վերապատրաստման դասընթացների ընթացքում անդրադառնալ հենց այդ թեմաներին: Հիմնական անհանգստացնող թեմաներն են սնկային հիվանդությունները, բակտերիալ հիվանդությունները (առաջանում են գարնանը պղնձային պրեպարատներ չսրսկելու պատճառով) և իսկական ալրացողը կեղծ ալրացողից տարբերակելը:

Շատերը համակարծիք էին, որ այս ոլորտում շարունակաբար լինում են տեխնիկական նորարարություններ և իրենք ևս հետաքրքրված են անցնելու վերապատրաստման դասընթացներ նոր տեխնոլոգիաների, դրանց կիրառելիության և արդյունավետության վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ վերապատրաստումների ընթացքում ներկայացվեն նորագույն տեխնոլոգիաներ, որոնք կիրառելի կլինեն Հայաստանյան ջերմատներում և որոնք կնպաստեն էներգախնայողությանը և արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը: Շատ հաճախ, ինչպես ջերմատների ղեկավարներն են նշում, նորագույն տեխնոլոգիաները, որոնք ներկայացվում են, կիրառելի են մեծ ջերմատներում: Իրենք հատկապես հետաքրքրված են փոքր ջերմատների հնարավորություններին համապատասխան տեխնոլոգիական նորարարություններով:

Ջերմատների համար վերապատրաստման առաջնային թեմաներն ընդգրկում են հետևյալը՝ սածիլների մշակություն, լուսավորության համակարգեր, ջերմաստիճանային, խոնավության համակարգ, պարարտացման ռեժիմ, հողախառնուրդների նոր տեսակներ, որոնք առկա չեն Հայաստանում, տարածքի արդյունավետ կառավարում, բույսերի տարբեր տեսակների համատեղում, մեծածախ շուկայի կառավարում, լոգիստիկա, որակյալ պարարտանյութեր և քիմիկատներ, առանձին բույսերի գծով բուժման այլընտրանքային ձևեր, Priva ծրագրի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն և մարդկային ռեսուրսների կառավարում:


3.8 Ջերմատնային տնտեսություններում մասնագետների կարիքներ

Մասնագիտական կարիքների վերաբերյալ հարցին մասնակիցները շատ տարբերվող պատասխաններ տվեցին: Անհրաժեշտություն կա համակարգչային գիտելիքներով երիտասարդ մասնագետների, որոնք շարունակաբար կհետևեն ոլորտում տեղի ունեցող նորարարություններին և կուսումնասիրեն միջազգային փորձը: Թունաքիմիկատների խանութի տնօրենը նշեց, որ խանութն ունի լավ խորհրդատուների կարիք, ովքեր ճիշտ խորհրդատվություն տալու համար ունեն անհրաժեշտ ագրոնոմիական գիտելիքներ: Մեծ ջերմատները հետաքրքրված էին մարդկային ռեսուրսների մասնագետներով, ովքեր կմշակեին աշխատողների գնահատման և խրախուսման նոր համակարգ: Ջերմատների ղեկավարներից ոմանք տեսնում էին նաև սաժիլների արտադրությամբ զբաղվող մասնագետների կարիք: Սակայն կան մասնագետներ, որոնց կարիքը կար գրեթե բոլոր ջերմատներում: Նրանք էին՝ բույսերի պաշտպաններ, հիդրոպոնիկայի մասնագետներ և ագրոնոմներ: Հատկապես կարևորվում է հիդրոպոնիկայի մասնագետների պատրաստումը ջերմատների համար, քանի որ ջերմատները հիդրոպոնիկայի եղանակով մշակության անցնելիս դիմում են հոլանդացի մասնագետներին, որոնց ծառայությունները բավական թանկ են հատկապես փոքր ջերմատների համար:

ՀԲԱԿ-ի տնօրենը նշեց, որ շատ կարևոր է, որ Հայաստանում լինեն կլիմայի կառավարման մասնագետներ, ջերմատների ինժեներական աշխատանքներ իրականացնող մասնագետներ, ագրոքիմիկոսներ և արժեշտային զարգացման մասնագետներ:

Ջերմատների ղեկավարները միակարծիք էին, որ լավ մասնագետներից է կախված ջերմատների արդյունավետ գործունեությունը:

Ձեռնարկությունում առկա գիտելիքների և հմտությունների պակաս



Աղբյուրը՝ ICARE


Հարցազրույցի մասնակից ջերմատները պետք է նշեին այն գիտելիքների և հմտությունների պակասը, որն առկա է իրենց ջերմատնային տնտեսություններում: Հարցաթերթում ներառված են եղել հետևյալ հմտությունները և գիտելիքները՝ տեխնոլոգիական գործընթացների վերահսկում և ղեկավարում, բույսերի պաշտպանության վերահսկում և իրականացում, տեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումների վերազինում, կատարելագործում և շահագործում, տեխնոլոգիական նորարարությունների կիրառում, շուկայավարություն, գնորդների հետ կապերի հաստատում, շուկայի ընդլայնում, որակի կառավարում, ջերմատնային տնտեսության կառավարում (ֆինանսական, տնտեսական):

Հարցվողների 75%-ը նշեց, որ կա բույսերի պաշտպանության վերահսկման և իրականացման գիտելիքի պակաս: Ինչպես իրենք են նշում, այս գիտելիքի պակասը մշտապես են զգում, քանի որ ամեն տարի ի հայտ են գալիս նոր հիվանդություններ, և միշտ անհրաժեշտություն կա բարելավելու առկա գիտելիքների բազան:

Տեխնոլոգիական գործընթացների վերահսկման, ղեկավարման և տեխնոլոգիական նորարարությունների կիրառման հմտությունների պակասը նույնպես առկա է ջերմատներից շատերում: Տեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումների վերազինման, կատարելագործման ու շահագործման, որակի կառավարման, շուկայավարության, գնորդների հետ կապերի հաստատման, շուկայի ընդլայնման և ջերմատնային կառավարման հմտությունների և գիտելիքների պակասը համեմատաբար փոքր տոկոս է կազմում: Ինչպես հարցազրույցի մասնակիցները նկատեցին, իրենք խնդիր չեն տեսնում գնորդների հետ կապերի հաստատման կամ ջերմատների կառավարման գործում: Տարիների փորձը և աշխատանքում մշտական ներգրավվածությունը իրենց թույլ է տալիս արդյունավետ իրականացնել ջերմատնային կառավարումը և գնորդների հետ կապերի հաստատումը:

3.9. Վերապատրաստումներին մասնակցելու պատրաստակամություն

Գծապատկեր 6. Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պատրաստակամություն



Սղբյուրը՝ ICARE

Հարցազրույցներին մասնակցած ջերմատների ղեկավարների 80%-ը նշեց, որ իր մասնագետներին կուղարկեր Հայաստանում կազմակերպվող ջերմատների կառավարման թեմայով վերապատրաստման դասընթացներին: Հարցվողների 20%-ը տվեց բացասական պատասխան: Նրանց թվում էր թունաքիմիկատների սերմերի վաճառքով զբաղվող Արտագրո ընկերությունը, որը նշեց, որ իրենք խորացված խորհրդատվություն չեն տալիս և իրենց ունեցած գիտելիքները բավարար են խանութի ծառայությունները ճիշտ մատուցելու համար: Մյուս ջերմատների ղեկավարները, որոնք ցանկություն չհայտնեցին մասնակցելու վերապատրաստման դասընթացների, ունեն փոքր ջերմատներ և ջերմատների կառավարումն իրականացնում են ընտանիքի անդամներով: Մինչդեռ եղան ջերմատներ, որ պատրաստակամություն ցուցաբերեցին տարածք տրամադրել վերապատրաստման գործնական մասը ապահովելու համար:

Ջերմատների ղեկավարների 68%-ը պատրաստ էր վճարել վերապատրաստման դասընթացների համար: 32%-ը տվյալ հարցին տվեց բացասական պատասխան: Վերապատրաստումների մասնակցելու պատրաստակամությունը գալիս էր հետևյալ նախապայմաններից՝ դասընթացների մատչելիություն և պրակտիկ կիրառելիություն:

3.10 Հմտությունների և գիտելիքների կիրառելիությունը ջերմատնային արտադրությունը կազմակերպելու համար

Հարցաթերթում ներկայացված ջերմատների կառավարման համակարգերի (Priva, Xelema etc.) մասին քաջատեղյակ էին թե մեծ և թե փոքր ջերմատների ղեկավարները, սակայն, ինչպես արդյունքներն են փաստում, տվյալ համակարգերը մեծ ջերմատների համար են նախատեսված: Հարցմանը մասնակցած 24 ջերմատներից միայն չորսն էին կիրառում վերոնշյալ համակարգերը, որոնց տարածքը 1 հեկտար և ավելի է: Ինչպես փոքր ջերմատների ղեկավարներն են նշում, մեծ ցանկություն կա անցնելու ավտոմատ համակարգերի, բայց ֆինանսական միջոցները չեն բավարարում, և իրենց համար շատ կարևոր է, որ Հայաստանում ներկայացվեն փոքր ջերմատների համար նախատեսված տեխնոլոգիաներ, որոնք հասանելի կլինեն ֆինանսական առումով և կիրառելի փոքր ջերմատներում:

Մարդկային ռեսուրսների կառավարման գիտելիքի կիրառումը բավական թերի էր թե մեծ և թե փոքր ջերմատների դեպքում: Փոքր ջերմատների պարագայում ջերմատան կառավարումն իրականացնում էին ընտանիքի անդամները և չկար մշակված կառավարման համակարգ: Մեծ ջերմատների դեպքում պատկերը գրեթե նույնն էր: Չնայած աշխատակազմն ավելի մեծ էր, սակայն աշխատակազմի կառավարման համակարգ չկար: Հետազոտությունների ընթացքում այցելված ջերմատներում լիովին բացակայում էր աշխատողների մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատումը: Ինչպես հարցազրույցին մասնակցած ջերմատների ղեկավարներն են նշում, շատ հաճախ աշխատողներն իրենք են համացանցում գտնում անհրաժեշտ տեղեկատվությունը կամ խորհրդակցում ոլորտի այլ մասնագետների հետ:

Այն ջերմատները, որոնք անցել են նորագույն տեխնոլոգիաների, մասնավորապես՝ Priva համակարգի, աշխատակիցներին համակարգի շահագործման եղանակներին ծանոթացնելու համար մասնագետ են հրավիրել Հոլանդիայից, բայց այլ թեմաներով կամ այլ առիթներով աշխատակիցների վերապատրաստումը ջերմատներում շարունակական բնույթ չի կրում: Հարցազրույցին մասնակցող ջերմատների ներկայացուցիչները լավատեղյակ էին և իրականացնում էին գրեթե բոլոր ազդեցիկ աշխատանքները, մասնավորապես բույսերի պաշտպանության ավանդական մեթոդները ամենաշատն էին կիրառվում ջերմատներում: Հարցազրույցին մասնակցող ջերմատների կառավարիչները/ազդեցիկները նշեցին, որ մշտապես իրականացնում են փոխառված միջոցների կառավարում, ինքնարժեքի վերլուծություն, ներդրումների ծրագրերի ֆինանսա-տնտեսական վերլուծություն, բայց, իհարկե, այս ամենն իրականացվում է իրենց գիտելիքների և փորձի սահմաններում:

4. Եզրակացություն

Ջերմատնային տնտեսությունների դերը շատ է կարևորվում Հայաստանում գյուղատնտեսության զարգացման գործում: Ջերմատնային տնտեսությունները մեծ ներուժ ունեն Հայաստանում ջերմատնային արտադրանքի ավելացման և արտահանման համար: Հատկապես վերջին 4 տարիների ընթացքում ջերմատնային տնտեսությունները զարգացման բարձր տեմպ և շահութաբերության մակարդակի աճ են գրանցել:

Չնայած ոլորտի զարգացման միտումներին, դեռևս շատ են ջերմատնային տնտեսությունների մտահոգող խնդիրները: Հարցազրույցին մասնակցած ջերմատնային տնտեսությունների ղեկավարներից շատերը միակարծիք էին, որ գազի գնի բարձր լինելը իրենց շատ է խանգարում արտադրանքի ծավալների մեծացման և/կամ ներկայիս արտադրության ծավալների պահպանման առումով: Հատկապես մտահոգիչ էր այն հանգամանքը, որ քիչ են լավ մասնագետները՝ ջերմատնային տնտեսություններում աշխատելու համար: Հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ ջերմատնային տնտեսություններն ունեն բույսերի պաշտպանների, հիդրոպոնիկայի մասնագետների և ագրոնոմների լուրջ կարիք: Մեծ խնդիր է ներկայացնում հիդրոպոնիկայի մասնագետ գտնելը Հայաստանում: Ջերմատնային տնտեսությունները հաճախ են դիմում օտարերկրյա մասնագետների օգնությանը հիդրոպոնիկայի եղանակով մշակության անցնելիս, քանի որ Հայաստանում չեն կարողանում գտնել անհրաժեշտ գիտելիքներով զինված մասնագետների:

Ջերմատնային տնտեսությունների փոքր տոկոսն է կիրառում բարձր տեխնոլոգիաներ ջերմատներում: Մասնավորապես մեծ ջերմատնային տնտեսությունները կիրառում են Priva ծրագիրը, որի գործարկման և հետազայում ծրագրի հետ առնչվող ցանկացած խնդրի դեպքում դիմում են օտարերկրյա մասնագետների օգնությանը, քանի որ Հայաստանում այս ծրագրին տիրապետող մասնագետներ չկան: Հարցերի միջոցով պարզ դարձավ, որ փոքր ջերմատնային տնտեսությունների ղեկավարները լավատեղյակ են նորագույն տեխնոլոգիաների և դրանց կիրառելիության մասին, բայց քչերը հնարավորություն ունեն անցնելու բարձր տեխնոլոգիաների՝ հաշվի առնելով իրենց սուղ ֆինանսական միջոցները: Փոքր ջերմատնային տնտեսությունները մեծ ցանկություն ունեն ծանոթանալ էներգախնայողություն ապահովող տեխնոլոգիաների, որոնք կիրառելի կլինեն փոքր ջերմատներում թե տեխնիկական և թե ֆինանսական առումով, քանի որ իրենց առաջնային խնդիրներից մեկը ինքնարժեքի իջեցումն է, ինչը թույլ կտա մրցունակ մնալ շուկայում:

Ջերմատնային տնտեսությունների ղեկավարները մեծ ցանկություն ունեն անցնելու վերապատրաստման դասընթացներ: Հարցազրույցի միջոցով պարզ դարձան առավել մեծ հետաքրքրություն ունեցող թեմաները, որոնց թվում էին՝ «Բույսերի պաշտպանությունը», «Բույսերի մշակության հիդրոպոնիկայի եղանակը», «Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը ջերմատնային տնտեսություններում»:

Հարցվողները նշեցին, որ ցանկալի է դասըթացները լինեն երեկոյան ժամերին, ինչը հնարավորություն կտա համատեղել աշխատանքը դասըթացների հետ: Հարցազրույցի մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին, որ իրենց աշխատակիցները, շատ դեպքերում հենց իրենք ջերմատան ղեկավարները մասնակցեն դասըթացներին և վճարեն դասըթացների համար:

Չնայած այն հանգամանքին, որ հարցման մասնակիցները նշում էին, որ ունեն անհրաժեշտ գիտելիքներ ջերմատան կառավարման, բիզնեսի ընդլայնման և ֆինանսական կառավարման հարցերում, այնուամենայնիվ իրավիճակը ոլորտում, հատկապես փոքր և միջին ջերմատների պարագայում, ցույց է տալիս, որ ոլորտում կա այս գիտելիքների լուրջ պակաս:

5. Հավելված

Ստորև ներկայացնում ենք հարցազրույցին մասնակցած 26 ընկերությունների տվյալները:

	Ընկերության անվանումը	Գտնվելու վայրը
1.	Հարությունյան Թերեզա ԱԶ	Ոսկեվազ, Արագածոնի մարզ
2.	Արտազրո ՍՊԸ	Արտաշատ, Արարատի մարզ
3.	Հակոբյան Քաջիկ ԱԶ	Արամուս, Կոտայքի մարզ
4.	Գայանե ԲԲԸ	Փարաքար, Արմավիրի մարզ
5.	Բաբախանյան Հովհաննես ԱԶ	Գայ, Արմավիրի մարզ
6.	Արտեմիս ՍՊԸ	Ակունք, Կոտայքի մարզ
7.	Զարգարյան Սամվել ՖԱ	Օշական, Արագածոտնի մարզ
8.	Արտո Խաչատրյան ՍՊԸ	Առատաշեն, Արմավիրի մարզ
9.	Հասառ ՍՊԸ	Գարգառ, Լոռու մարզ
10.	Բիգա հայ-հոլանդական ընկերություն	Ակունք, Կոտայքի մարզ
11.	Այ-Թի-Առ Ազրո ՍՊԸ	Մայակովսկի, Կոտայքի մարզ
12.	Ավալանք ՍՊԸ	Ոսկեվազ, Արագածոնի մարզ
13.	Էկոգրին ՍՊԸ	Ղուկասավան, Արարատի մարզ
13.	Շահումյանի ջերմատնային կոմբինատ	Մերձավան, Արմավիրի մարզ
14.	Էկոտոմատո ՓԲԸ	Գողթ, Կոտայքի մարզ
15.	Ռաֆ Էնդ Էլ ՍՊԸ	Սևան, Գեղարքունիքի մարզ
16.	Սվիթ Բերի ՍՊԸ	Նոր Գեղի, Կոտայքի մարզ
17.	Ամազոնիտ ՍՊԸ	Նոր Խարբերդ, Արարատի մարզ
18.	Գազիկ Գրուպ	Գեղանիստ, Արարատի մարզ
19.	Գառնիկ Ազաջանյան ԱԶ	Աղավնատուն, Արմավիրի մարզ
20.	Արմեն Սիմոնյան ՖԱ	Դարակերտ, Արարատի մարզ
21.	Ալկամար ՍՊԸ	Էջմիածին, Երևանյան խճուղի 1
22.	Կարինե Սարգսյան ԱԶ	Շահումյան, Արմավիր
23.	Բերքառատ ՍՊԸ	Դարակերտ, Արարատի մարզ
24.	Մավաս Գրուպ ՍՊԸ	Զորադրյուր, Կոտայքի մարզ
25.	Վարդան Համբարձումյան ԱԶ	Գայ, Արմավիրի մարզ
26.	Հայկական բերքի առաջնդման կենտրոն (ՀԲԱԿ)	Երևան

Համագործակցությունը`

